



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Երևան, Բաղրամյան 19
Հեռ 011-513-288

23 դեկտեմբերի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սիմոնյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածների՝ որպես օրենսդրական նախաձեռնություն, Ձեզ ենք ներկայացնում «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են.

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Նարեկ Զեյնալյան),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքի փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը.

դ) նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքները:

Խնդրում ենք սահմանված կարգով նախագիծը դնել շրջանառության մեջ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ՝

ՆԱՐԵԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 41-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3. Ախտաբանաանատոմիական դիախերծումներն իրականացվում են հիվանդությունների հետմահու ախտորոշման և մահվան պատճառը որոշելու նպատակով, միայն հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում:

Ախտաբանաանատոմիական դիախերծումների ամցկացման կարգը սահմանում է Կառավարությունը:>>:

Հոդված 2. Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետից հանել <<չարորակ>> բառը:

Հոդված 4. Օրենքի 41-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել <<' բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում:>> բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 1-ին հոդվածի: Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Ախտաբանաանատոմիական գործունեությունը կարելի էր ունի հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման եւ բուժման գործում: Այդ գործունեության շնորհիվ հայտնաբերվում են հիվանդությունների հետմահու ախտորոշման և մահվան պատճառները: Դրանից բխում է, որ ախտաբանաանատոմիական հետազոտությունների իրականացումը համարվում է մասնագիտացված բժշկական ծառայություն և Հայաստանի Հանրապետությունում առողջապահության զարգացումը ենթադրում է բուժհաստատություններում որակյալ ախտորոշիչ եւ բուժական ծառայությունների տրամադրում: Ներկայում, ախտաբանաանատոմիական գործունեությունը կարգավորվում է «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» գործող օրենքի 41-րդ հոդվածի դրույթներով: Ախտաբանաանատոմիական դիախեռծումների արդյունքում կատարված վիճակագրական վերլուծությունները նաև ազդում են բյուջեի պլանավորման վրա:

Հայաստանի Հանրապետությունում ախտաբանաանատոմիական բժշկական օգնության և սպասարկման տեսակի գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեն 49 գործող կազմակերպությունները: Դրանցից 40-ը հանդիսանում են հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ (հիվանդանոցներ): Գործում են նաև կազմակերպություններ (9), որոնք առողջապահության նախարարության կողմից ստացել են բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային՝ բջջաբանական և հյուսվածքաբանական (ձևաբանական) տեսակներով գործունեություն իրականացնելու լիցենզիաներ և իրականացնում են ախտաբանաանատոմիական գործունեություն: Արտահիվանդանոցային բջջաբանական և հյուսվածքաբանական (ձևաբանական) տեսակներով գործունեություն իրականացնողները դուրս են վերահսկողությունից, քանի որ դրանք գործում են հիվանդանոցներից դուրս: Ասվածի հիմնավորումն այն է, որ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 3-րդ ենթակետի և Կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշման, կարող է

միայն հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների լիցենզիայի պայմանների և պահանջների նկատմամբ վերահսկողություն իրականացնել:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից Եվրոպական տարածաշրջանի 53 երկրում արված հետազոտությունների՝ Հայաստանը առաջին տեղն է գրավում մահվան դեպքում ախտաբանաանատոմիական դիախերոմների քանակով: Այսպես՝ 2005 թվականին ՀՀ-ում մահացածների 34 տոկոսի դեպքում կատարվել են ախտաբանաանատոմիական դիախերոմներ: 2006 թվականին ախտաբանաանատոմիական դիախերոմներ են կատարվել մահացածների 47 տոկոսի դեպքում: 2016 թվականին այդ ցուցանիշը հասել է 70 տոկոսի, իսկ 2019 թվականին՝ մոտ 90 տոկոսի: Մահվան դեպքերում ախտաբանաանատոմիական դիախերոմների քանակով հաջորդ տեղում Ռուսաստանն է՝ 2019-ին այն եղել է 67 տոկոս: Օրինակ, այս ցուցանիշը 2019 թվականին Լիտվայում կազմել է 14,4 տոկոս, Դանիայում՝ 2 տոկոս, Եվրոպական տարածաշրջանի երկրներում միջինում՝ 25,6 տոկոս:

Թերևս, կարելի է ենթադրել, որ Հայաստանում ախտաբանաանատոմիական գործունեությունը ծավալվում է քիզնեսի տրամաբանությամբ:

Նախագծի նպատակն է ճշգրտել <<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> գործող օրենքի 41-րդ հոդվածի դրույթները, ինչպես նաև խմբագրելու, այնպես էլ դրանց կիրառությունը տեսանելի և վերահսկելի դարձնելու իմաստով:

Մասնավորապես նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է օրենքում ամրագրել, որ ախտաբանաանատոմիական դիախերոմներն կատարվում են հիվանդությունների հետմահու ախտորոշման և մահվան պատճառը որոշելու նպատակով միայն հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում: Այս դրույթի ամրագրումը թույլ կտա ախտաբանաանատոմիական գործունեությունը դարձնել վերահսկելի:

Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է վերացնել անճշտությունը՝ ուժը կորցրած ճանաչել 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը, քանի որ գործող օրենքի համապատասխան՝ ախտաբանաանատոմիական դիախերոմ կատարվում է միայն կլինիկական ախտորոշման առկայության դեպքում:

Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է հանել <<չարորակ>> բառը, քանի որ չարորակ նորագոյացություն ախտորոշումն արդեն ենթադրում է հյուսվածքաբանական վերիֆիկացիա:

Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվում է փնտաբանաանատոմիական դիախերծում
չկատարելու դեպքում հնարավորություն տալ բժշկական օգնություն և սպասարկում
իրականացնող կազմակերպություններում ունենալու դիակի խնամքի, մշակման (դաբաղման)
և պահպանման ծառայություններ:

Հոդված 41. Ախտաբանաանատոմիական գործունեությունը

1. Ախտաբանաանատոմիական գործունեությունը բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որն իրականացվում է ձևաբանական հետազոտությունների և ախտաբանաանատոմիական դիախերծումների միջոցով:

2. Ձևաբանական հետազոտություններն իրականացվում են կենդանության օրոք հիվանդությունների ախտորոշման նպատակով: Կենդանության օրոք մարդու մարմնից հեռացված ցանկացած օրգան և (կամ) հյուսվածք և (կամ) հեղուկ ենթակա է պարտադիր ձևաբանական հետազոտության ախտորոշման ճշգրտման, հաստատման, բուժման արդյունավետության գնահատման նպատակով: Ձևաբանական հետազոտությունների ցանկը և անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը:

3. Ախտաբանաանատոմիական դիախերծումներն իրականացվում են հիվանդությունների հետմահու ախտորոշման և մահվան պատճառը որոշելու նպատակով: Ախտաբանաանատոմիական դիախերծումների անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը:

3. Ախտաբանաանատոմիական դիախերծումներն իրականացվում են հիվանդությունների հետմահու ախտորոշման և մահվան պատճառը որոշելու նպատակով, միայն հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում:

Ախտաբանաանատոմիական դիախերծումների անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը:

4. Ախտաբանաանատոմիական դիախերծումները կարող են չիրականացվել՝ հիմք ընդունելով մահացածի՝ կյանքի օրոք հայտնած կամքը կամ ծնողի կամ ամուսնու կամ երեխաների կամ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը, բացառությամբ՝

1) երբ պացիենտը մահացել է հիվանդանոցային հաստատությունում, և առկա է ճշտված եզրափակիչ կլինիկական ախտորոշում:

2) վարակիչ հիվանդությունների և Կառավարության հաստատած՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկի առկայության կամ դրանց կասկածի դեպքում:

3) չարորակ նորագոյացություններից մահվան դեպքում, երբ բացակայում է դրանց հյուսվածաբանական հաստատումը (վերիֆիկացիան):

4) շուրջօնոյան (պերինատալ) մահացության դեպքում:

5. (մասն ուժը կորցրել է 04.06.21 ՀՕ-262-Ն)

6. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված անձանց բացակայության դեպքում պարտադիր կարգով իրականացվում է դիախերժում:

7. Ախտաբանաանատոմիական դիախերժում չիրականացնելու դեպքում կարող են իրականացվել դիակի խնամքի, մշակման (դաբաղման) և պահպանման ծառայություններ՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում:

(41-րդ հոդվածը փոփ. 04.06.21 ՀՕ-262-Ն)

ՏԵՂԵԿԱՆՔ

Օրենքի նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտություն չկա: